

CAPİ - ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

Ներգաղթյալների դրամական օգնության ծրագիրը (Cash Assistance Program for Immigrants - CAPI), որը ֆինանսավորվում է պետության կողմից, իրականացվել է 1998թ. նոյեմբերի 1-ին, վեհաժողովի 2279 օրինագծի արդյունքում: Այն նախագծված է տրամադրել ամսական դրամական նպաստներ՝ տարեց, կույր և հաշմանդամություն ունեցող ոչ քաղաքացիներին, որոնք իրավունք չունեն ստանալ Լրացուցիչ Անվտանգության Եկամուտ/Պետական Լրացուցիչ Վճարում (SSI/SSP) բացառապես իրենց ներգաղթի կարգավիճակի պատճառով: CAPI-ի մասնակիցները կարող են իրավասու լինել CalFresh-ի, Medi-Cal-ի, տնային օժանդակ ծառայությունների և այլ հասարակական օգնության համար: Նրանք յուրաքանչյուր նպաստի համար պետք է առանձին դիմեն:

ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ

CAPİ ստանալու իրավունք ունենալու համար անձը պետք է ավարտի CAPI դիմումի գործընթացը և համապատասխանի հետևյալ բոլոր պայմաններին.

- Ոչ քաղաքացի, բավարարում է համապատասխան ներգաղթի կարգավիճակին;
- 65 և բարձր տարիքի, կույր և հաշմանդամ, ինչպես սահմանված է SSI/SSP նպատակներով;
- Կալիֆոռնիայի բնակիչ (կացության ժամկետ չի պահանջվում);
- Ռեսուրսներ թույլատրելի սահմաններից ցածր; և
 - \$2,000 անհատի համար
 - \$3,000 զույգի համար
- SSI/SSP-ի համար իրավասու չէ ելնելով բացառապես իր ներգաղթի կարգավիճակից:

ՈՉ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Մարդը իրավասու չէ CAPI-ի համար, եթե

- ԱՄՆ – ի քաղաքացի է
- Առնվազն 30 օր անընդմեջ հասարակական հաստատության ռեզիդենտ է
- Փախչող հանցագործ է կամ պայմանական վաղաժամկետ ազատ արձակումը խախտող կամ
- Առնվազն 30 օր անընդմեջ Կալիֆոռնիայում չի ապրում:



ԴԻՄՈՒՄԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

CAPI - ի դիմումները կարող են ներկայացվել Հանրային Սոցիալական Ծառայության Վարչության ցանկացած շրջանային գրասենյակում: Սակայն, բոլոր CAPI - ի դիմումները կդիտարկվեն Metro North շրջանային գրասենյակում:

Metro North District Office #38
(CAPI Centralized Office)
2601 Wilshire Boulevard
Los Angeles, CA 90057
(213) 639 - 5407

Բացի այդ, CAPI դիմորդները կարող են զանգահարել Հաճախորդների սպասարկման կենտրոն (866) 613 - 3777 հեռախոսահամարով կամ դիմել փոստով:

